ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 86
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
31-ը հունվարի 2026թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)
2. ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)
3. ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2024-2025 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Յ. Դավթյան)
4. *Ընթացիկ հարցեր:*

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին և երկրորդ՝ *դեկանների ընտրության հարցերի վերաբերյալ* լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը:

Տնօրենը նշեց, որ համաձայն սահմանված կարգի և իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 26-ի հրամանի, մասնաճյուղի պաշտոնական կայքում հայտարարվել էր մրցույթ երկու առանցքային ֆակուլտետների դեկանների թափուր պաշտոնների համար: Թեկնածուների առաջադրման գործընթացն ավարտվել է 2026 թվականի հունվարի 17-ին: Մ. Օթարյանը շեշտեց, որ մրցույթը եղել է լիովին բաց և ապահովվել է առավելագույն թափանցիկություն:

Տնօրենը հայտնեց, որ համալսարանն որդեգրել է նոր քաղաքականություն՝ հրաժարվել «պաշտոնակատարների» ինստիտուտից: Այս որոշումը նպատակ ունի ապահովել, որ ստորաբաժանումների ղեկավարները լինեն հիմնական աշխատակիցներ: Այս գործընթացը սկսվում է նշված երկու ֆակուլտետներից և հետագայում կտարածվի մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների վրա:

Տնօրենը հաստատեց, որ մասնաճյուղի տնօրինությունը և գիտական քարտուղարը մանրամասն ուսումնասիրել են փաստաթղթերը, և թեկնածուները լիովին համապատասխանում են սահմանված պահանջներին:

Մ. Օթարյանը նշեց, որ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար առաջադրվել է Նաթելլա Սերոժի Գրիգորյանը, ում թեկնածությունը երաշխավորվել է ֆակուլտետի կողմից: Նա ունի շուրջ 18 տարվա աշխատանքային ստաժ (2008 թվականից):

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար առաջադրվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալեքսան Շամիլի Մարգարյանը, ում Օթարյանը բնութագրեց որպես մասնաճյուղի «հնաբնակներից» մեկը՝ ունենալով ավելի քան 30 տարվա ստաժ,:

Նա նշեց, որ երկու թեկնածուներն էլ ունեն գիտությունների թեկնածուի աստիճան և դոցենտի կոչում, երկուսի ստաժն էլ գերազանցում է պահանջվող նվազագույն 5 տարին, իսկ տարիքը չի գերազանցում օրենքով սահմանված 65 տարեկանը: Թեկնածուների փաթեթները ներառում են բոլոր անհրաժեշտ վավերաթղթերը (դիմումներ, կադրերի հաշվառման թերթիկներ, ինքնակենսագրություններ, դիպլոմներ և այլն):

Մ. Օթարյանը եզրափակեց իր խոսքը՝ նշելով, որ առկա են բոլոր իրավական հիմքերը ընտրության հաջորդ փուլին՝ ծրագրերի ներկայացմանը անցնելու համար, և ձայնը առաջինը տրամադրեց Նաթելլա Գրիգորյանին։

Նաթելլա Գրիգորյանը, ներկայացնելով ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի զարգացման իր ծրագիրը, նշել է, որ այն ծավալուն փաստաթուղթ է (15 էջ), որը մշակվել է ԵՊՀ և մասնաճյուղի կանոնադրությունների ու ռազմավարական ծրագրերի հիման վրա։

Հաղորդման հիմնական դրույթները և առաջնահերթությունները ներկայացվել են հետևյալ ուղղություններով.

- Որակյալ կրթության ապահովում. թեկնածուն կարևորել է կրթական ծրագրերի արդիականացումը՝ համահունչ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքին։ Նախատեսվում է ներդնել անհատական կրթական հետագծեր, զարգացնել էլեկտրոնային ուսուցման (E-learning) գործիքակազմը և ակտիվացնել փոխանակման ծրագրերը թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների համար։
- Գիտահետազոտական գործունեություն. նշվել է, որ ֆակուլտետն ապահովում է մասնաճյուղի գիտական արդյունքի շուրջ 80%-ը (վերջին 176 հետազոտություններից 140-ի հեղինակները ֆակուլտետի անձնակազմից են)։ Նախատեսվում է ստեղծել գիտական աշխատանքները համակարգող խումբ, ավելացնել դրամաշնորհների քանակը և խրախուսել երիտասարդ գիտնականներին։
- Համագործակցություն «Վիքիմեդիա Հայաստանի» հետ. սա ծրագրի առանցքային նորույթներից է։ Նախատեսվում է բարելավել Վիքիպեդիայի հայոց պատմությանն ու մշակույթին վերաբերող հոդվածները և ապահովել դրանց թարգմանությունը երեք լեզուներով, ինչը ուսանողների համար կլինի պրակտիկ աշխատանք, իսկ դասախոսների համար՝ խրախուսվող գործունեություն։
- Ենթակառուցվածքների զարգացում. առաջարկվել է ստեղծել լինգաֆոնային լսարան՝ օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչպես նաև բարելավել աշխատանքային սենյակների և սանհանգույցների վիճակը։
- Մարդկային ռեսուրսներ և սերնդափոխություն. ֆակուլտետի անձնակազմի միջին տարիքը 53.5 է, ուստի կարևորվում է սահուն սերնդափոխությունը և երիտասարդ կադրերի մասնագիտական առաջընթացի խստացված վերահսկողությունը (թեկնածուական պաշտպանություններ)։
- Համայնքային ինտեգրում. ֆակուլտետը նախատեսում է իրականացնել վերապատրաստման ծրագրեր նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների և մարզի բարձրաստիճան պաշտոնյաների համար։ Ն. Գրիգորյանի ծրագիրը կարող եք տեսնել հավելված 1-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք. Հարությունյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը։

Մասնավորապես Մ. Օթարյանը բարձր է գնահատել զեկույցի կառուցվածքը և հատկապես կարևորել այն փաստը, որ թեկնածուն խոսել է ոչ թե անհատական («մտածում եմ»), այլ թիմային աշխատանքի սկզբունքով («մտածում ենք»)։ Տնօրենն անդրադարձել է նաև երիտասարդ կադրերի մասնագիտական առաջընթացին՝ շեշտելով, որ այն թիրախային պետք է լինի, և թեկնածուական պաշտպանության հարցում առաջընթաց չունեցողները չպետք է շարունակեն իրենց աշխատանքը։ Նա նաև գոհունակություն է հայտնել լինգաֆոնային լսարանների ստեղծման և բարձրաստիճան պաշտոնյաների վերապատրաստման նախաձեռնությունների վերաբերյալ։

Հարց է ուղղվել ֆակուլտետի կողմից ներկայացված և չֆինանսավորված գիտական թեմաների քանակի վերաբերյալ, ամառային և աշնանային դպրոցների, ինչպես նաև արտասահմանցի ուսանողների ներգրավման ձևաչափի մասին:

Խորհրդի անդամներից մեկը հետաքրքրվել է «Վիքիմեդիա Հայաստանի» հետ համագործակցության մանրամասներով, մասնավորապես՝ դրամական խրախուսման սկզբունքներով և գումարի չափով:

Քննարկման ավարտին Մ. Օթարյանը շնորհակալություն է հայտնել հետաքրքիր ծրագրի համար և հաջողություն մաղթել թեկնածուին:

Այնուհետև Տնտեսագիտության ֆակուլտետի 2026-2031 թթ. Զարգացման իր ծրագիրը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Իր ելույթի սկզբում թեկնածուն նշեց, որ չի կրկնի նախորդ զեկուցողի ներկայացրած այն մանրամասները, որոնք վերաբերում են ընդհանուր մասնաճյուղին, և կկենտրոնանա ֆակուլտետի առանձնահատուկ անելիքների վրա:

Ծրագրի հիմնական դրույթները Ա. Մարգարյանը ներկայացրեց հետևյալ ուղղություններով.

- **Աշխատանք դիմորդների հետ.** Ա. Մարգարյանն առաջարկում է ավելացնել այցելությունները Տավուշի և հարակից մարզերի դպրոցներ ու քոլեջներ: Այդ այցերին պետք է մասնակցեն ֆակուլտետի հեղինակավոր դասախոսներն ու ուսանողները, ովքեր կներկայացնեն կրթական ծրագրերի առավելություններն ու լավագույն շրջանավարտների հաջողությունները: Նախատեսվում է նաև կազմակերպել աշակերտների այցեր մասնաճյուղ՝ ծանոթացնելու նյութատեխնիկական բազային:
- **Կրթական ծրագրերի բարելավում և նոր նախաձեռնություններ.** մոնիթորինգ և արդիականացում՝ Ֆակուլտետում գործող «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» (բակալավր) և «Գործարար վարչարարություն (կառավարում)» (մագիստրոս) ծրագրերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին: Նոր կրթական ծրագիր՝ թեկնածուն հայտնեց, որ ուսումնասիրություններ են կատարվում «Կառավարում» նոր բակալավրական ծրագիր ներդնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով դիմորդների մեծ հետաքրքրությունը: Օտար լեզուների ներդնում՝ առաջարկվում է ներդնել անգլերեն և ռուսերեն դասընթացներ կամ դասախոսության նյութերը մատուցել օտար լեզվով: Պրակտիկաներ և գործատուների հետ համագործակցություն՝ կարևորեց պրակտիկաների բովանդակության լավարկումը և անցկացման վայրերի ընդլայնումը: Նախատեսվում է խորացնել կապերը առանցքային գործընկերների հետ, ինչպիսիք են՝ ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի կենտրոնը, Տավուշի մարզպետարանը, առևտրային բանկերը և զբոսաշրջային կազմակերպությունները: Այս կառույցների բանիմաց աշխատակիցները պետք է ներգրավվեն նաև որպես հրավիրյալ դասախոսներ:
- **Գիտական հետազոտություններ և ուսանողական առօրյա.** առաջնահերթություն է համարվում ֆակուլտետի հետազոտությունների տեսանելիության բարձրացումը միջազգային ամսագրերում: Առաջարկվում է ակտիվ համագործակցություն ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հետ՝ կազմակերպելով ուսանողների փոխադարձ այցեր և մասնագիտական դասաժամեր:

Ա. Մարգարյանի ծրագիրը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք. Հարությունյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը:

ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը շնորհակալություն հայտնեց թեկնածուին զեկույցի համար և առանձնահատուկ ուշադրություն հրավիրեց նոր կրթական ծրագրի ներդնման հարցին: Տնօրենը նշեց, որ անկախ քվեարկության արդյունքներից, ֆակուլտետը պետք է ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ աշխատի «Կառավարում» բակալավրական ծրագրի ներդնման ուղղությամբ: Նա նաև շեշտեց, որ «Ֆինանսներ» կրթական ծրագիրը շատ գրավիչ է և մրցակցային, ուստի նոր ծրագրերի ավելացումն անհրաժեշտություն է:

Գ. Սիմոնյանը հարց ուղղեց ֆակուլտետի տեղական կադրերի վերաբերյալ: Մասնավորապես, նրան հետաքրքրում էր, թե ընդհանուր թվի մեջ քանիսն են տեղական մասնագետները և ինչպիսին են նրանց աճի հնարավորությունները: Ի պատասխան՝ Ա. Մարգարյանը ներկայացրեց ըստ ամբիոնների կադրային պատկերը՝ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում աշխատում են 25 դասախոս, որոնցից 13-ը գիտությունների թեկնածու են, միջին տարիքը՝ 45, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում 13 դասախոս, որոնցից 7-ը գիտությունների թեկնածու են, սակայն միջին տարիքը մտահոգիչ է՝ 61.5:

Այնուհետև փակ գաղտնի քվեարկությունը կազմակերպելու համար ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Գևորգ Սիմոնյան, Քրիստինե Հարությունյան և ուսանող՝ Սիրանուշ Աբազյան:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով հաշվիչ հանձնաժողովն արձանագրեց.

• **Նաթելլա Գրիգորյան՝** 26 կողմ, 1 դեմ, 0 անվավեր:

• **Ալեքսան Մարգարյան՝** 26 կողմ, 1 դեմ, 0 անվավեր:

Այնուհետև միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ որոշվեց՝

ՈՐՈՇՈՒՄ № 86/1

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 23-րդ կետի 10)-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 10)-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ. մայիսի 27-ի նիստում հաստատված «ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի» 26-րդ և 27-րդ կետերը ու փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը որոշում է.

1. **Հաստատել** ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստում ձևավորված հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված ֆակուլտետների դեկանների ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:
2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով (կողմ՝ 26, դեմ՝ 1, անվավեր՝ 0) **Նաթելլա Մերոժի Գրիգորյանին** ընտրված համարել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ 5 (հինգ) տարի ժամկետով:
3. Սույն որոշումը և ընտրության վերաբերյալ փաստաթղթային փաթեթները ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենին՝ ընտրված դեկանների հետ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր կնքելու համար:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՈՐՈՇՈՒՄ № 86/2

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 23-րդ կետի 10)-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 10)-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ. մայիսի 27-ի նիստում հաստատված «ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի» 26-րդ և 27-րդ կետերը ու փակ, գաղտնի քվեարկության արդյունքների վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը որոշում է.

1. **Հաստատել** ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստում ձևավորված հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված ֆակուլտետների դեկանների ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ թիվ 2 արձանագրությունը:
2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով (կողմ՝ 26, դեմ՝ 1, անվավեր՝ 0) **Ալեքսան Շամիլի Մարգարյանին** ընտրված համարել Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ 5 (հինգ) տարի ժամկետով:
3. Սույն որոշումը և ընտրության վերաբերյալ փաստաթղթային փաթեթները ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենին՝ ընտրված դեկանների հետ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր կնքելու համար:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2024-2025 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Ա. Դավթյանը նշեց, որ հարցումներն իրականացվել են առցանց եղանակով՝ համալսարանական էլեկտրոնային հասցեների միջոցով: Առաջին կիսամյակի հարցումները կատարվել են փետրվար-մարտ ամիսներին, իսկ երկրորդինը՝ հուլիսի 1-ից սեպտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Առկա ուսուցման 1098 ուսանողից մասնակցել է 650-ը (59.2%), հեռակա ուսուցման 857 ուսանողից մասնակցել է 266-ը (31.04%):

Նշվեց, որ հարցաշարի առաջին երկու հարցերը, որոնք վերաբերում էին մասնաճյուղում կոռուպցիոն երևույթներին, 0 տոկոս են կազմել, ինչը նշանակում է, որ նման երևույթներ չեն արձանագրվել:

Կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը հարցվողների 92%-ը (826 ուսանող) արդյունավետ է համարել: Ֆակուլտետների դեկանատներից ամենաբարձր ցուցանիշը գրանցել է Տնտեսագիտության ֆակուլտետը, ամենացածր ցուցանիշը ստացել է Կիրառական արվեստի ֆակուլտետը: Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, թեև ընդհանուր ցուցանիշով զիջում է տնտեսագիտությանը, սակայն ըստ տարիների անընդհատ աճ է ունեցել:

Ամբիոնները գնահատվել են հետևյալ կերպ (առկա համակարգ).

Ամենաբարձր միավորը (4.8) ստացել է Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը: Ամենացածր միավորը (4.5) ստացել է Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնը:

Ա. Դավթյանը ներկայացրեց նաև ուսանողների դժգոհությունները և առաջարկները ըստ ֆակուլտետների.

• Հումանիտար գիտություններ. ուսանողներն առաջարկել են ավելացնել գործնական դասաժամերը և բարելավել տեխնիկական հագեցվածությունը: Բարձրացվել է նաև «օբյեկտիվ գնահատման» խնդիրը:

• Տնտեսագիտություն. հիմնական պահանջը գրադարանում մասնագիտական գրքերի քանակի ավելացումն էր և դարձյալ օբյեկտիվ գնահատումը: Ա. Դավթյանը նաև նշել է, որ հեռակա համակարգի տնտեսագետ ուսանողների շրջանում նկատվում է որոշակի դժգոհության «կարմիր թել»:

• Կիրառական արվեստ. ուսանողները պահանջել են ավելացնել մասնագիտական առարկաների ժամաքանակը և թարմացնել արվեստանոցների գույքը:

Քննարկման ընթացքում պարզվել է, որ Կիրառական արվեստի ֆակուլտետում առկա է ավելի քան 50 քառակուսի մոլբերտ, սակայն ուսանողները պահանջում են «եռոտանի» մոլբերտներ, որոնք ավելի հարմարավետ են փոքր լսարաններում աշխատելու համար:

Ա. Դավթյանի զեկույցը տես հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք.

Հարությունյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը:

Զեկույցի շուրջ ծավալված քննարկման ժամանակ նշվել է, որ ուսանողները հաճախ «օբյեկտիվ գնահատում» ասելով հասկանում են տարբեր բաներ. լավ սովորողները դժգոհում են, երբ չսովորողները բարձր են գնահատվում, իսկ մյուսները՝ երբ իրենց գնահատականը ցածր է լինում: Մ. Օթարյանը շեշտել է, որ գնահատման չափանիշները (ռուբրիկները) պետք է լինեն հստակ, որպեսզի ուսանողի համար հասկանալի լինի իր գնահատականի ձևավորումը:

Առաջարկվել է, որ դեկանատներն ու ամբիոնները պետք է մանրամասն վերլուծեն իրենց ստորաբաժանումների և առանձին դասախոսների տվյալները՝ անհրաժեշտության դեպքում կատարելով կադրային կամ մեթոդական փոփոխություններ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2024-2025 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ